ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Սոնա Ադամյանը, Անահիտ Աղամալյանը, Արթուր Գրիգորյանը, Արտուշ Մաթևոսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը

Նիստը արձանագրում էր Հասմիկ Գրիգորյանը

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 25-ի N9 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի վարձավճարի պարտավորությունը զիջելու մասին

2)Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

4)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 78-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Զիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Բորիկ Վաղինակի Քարամյանին (ծնված՝ 11.03.1944թ., անձնագիր՝ AT0276844, տրված՝ 14.08.2019թ., 045-ի կողմից) կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի վարձավճարի պարտավորությունը՝ ապառք 20736 /քսան հազար յոթ հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ և տույժ 9402 /ինը հազար չորս հարյուր երկու/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 79-Ա/

ԼՍԵՑ - ***ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/ԶԵԿ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Սահմանել գույքահարկի արտոնություն և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենցի փ. շ.3 բն.8 հասցեում հաշվառված Մարտին Մաթևոսի Հովհաննիսյանին (ծնված 10.10.2000թ., ՀԾՀ՝ 2010000021) սեփականության իրավունքով իրեն պատկանող LEXUS GS 45 OH մակնիշի

(թողարկում՝ 2007թ., պետ. համարանիշ՝ 09JJ707, ծիաուժ՝ 292) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 96000 (իննսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2022թ.-ի տարեկան գույքահարկի վճարումից:

2.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 80-Ա/

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Ադելյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի պալատի 3-րդ հարկի 6-րդ՝ 139,7 քմ և 7-րդ՝ 18,9 քմ մակերեսով տարածքները (համաձայն հատակագծի), անհատույց օգտագործման իրավունքով՝ 10 տարի ժամանակահատվածով տրամադրել «ԼՈՖԹ» ՀԿ-ին՝ որպես «ԼՈՖԹ-ՄԵՂՐԻ» երիտասարդական, բազմաֆունկցիոնալ և երկարաժամկետ գործունեության ժամանակացույց ունեցող կենտրոն ստեղծել ուհամար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 81-Ա/

ԼՍԵՑ - ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Գուդեմնիս բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն, որպես առաջնահերթ միջոցառում, էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» փոխադրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0097 հեկտար հողամասերը, որից 0.0025

հեկտար այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 09-029-0120-0027-ից), 0.0072 հեկտար արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 09-029-0112--0001-ից) բջջային կայանի և էլ. ենթակայանի կառուցման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 82-Ա/

Ավագանու անդամներ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՁԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Հ. Գրիգորյան